

**Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին՝  
«2019 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի մասին**

Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով, կարծիքի է ներկայացվում [«2019 թվականի վիճակագրական ծրագրի»](#) նախագիծը՝ խնդրանքով նշված փաստաթղթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների պարագայում, դրանք մինչև սույն թվականի **օգոստոսի 15-ը** ներկայացնել ՀՀ վիճակագրական կոմիտեին, հետևյալ հասցեներով՝

**փոստային հասցեն՝** ք. Երևան, 0010, Հանրապետության պողոտա,  
Կառավարության տուն թիվ 3 կամ

**էլեկտրոնային հասցեն՝** [svod@armstat.am](mailto:svod@armstat.am)

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դրույթի, վիճակագրական ծրագրերը մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Ըստ վերոնշյալ օրենքի, ՀՀ տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Ծրագրի նախագիծը պարունակում է տարածման ենթակա պաշտոնական վիճակագրության ողջ ցանկն ըստ պաշտոնական վիճակագրության յուրաքանչյուր արտադրողի, տեսակների և հաճախականության, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության արտադրողների կողմից իրականացվելիք բոլոր հետազոտությունների նկարագրությունները, տվյալների հավաքման մեթոդները, ռեսպոնդենտների ընդգրկվածության աստիճանը, մասնակցության պարտադիր կամ կամավոր բնույթը, վիճակագրության տեսակի կամ վիճակագրական ռեգիստրների թվարկումը, արտադրողներին տրամադրվող վարչական տվյալների բոլոր հավաքածուների ցանկն ըստ անվանումների, դրանց տրամադրողների, վիճակագրական ռեգիստրների տեսակների, ինչպես նաև այդ տվյալների տրամադրման հաճախականությունը և վիճակագրական միավորների տեսակը:

Հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտներ հանդիսացող ռեսպոնդենտների կողմից ներկայացված բազմաթիվ առաջարկություններն ու դժգոհությունները, կապված վիճակագրական հաշվետվությունների ներկայացման սեղմ ժամկետների հետ, ՀՀ ՎԿ-ն սույն ծրագրի նախագծում առաջին անգամ ռեսպոնդենտների կողմից վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետները հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ օրվա փոխարեն նախագծել է մինչև 15-րդ օրը: Դրանով պայմանավորված, ծրագրի նախագծում փոփոխություններ են նախատեսվել նաև ամփոփ վիճակագրության տարածման ժամկետներում: Այսպես, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» մամուլի հաղորդագրությունը նախատեսված հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսվա 20-ի փոխարեն հրապարակել ամսվա վերջին աշխատանքային օրը, իսկ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը՝ հաշվետու ժամանակաշրջանը հաջորդող վերջին աշխատանքային օրվա փոխարեն՝ այդ ժամանակաշրջանին հաջորդող 40-րդ օրը:

Վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների նախատեսվող սույն փոփոխությունները հնարավորություն կընձեռեն տնտեսավարող սուբյեկտներ հանդիսացող ռեսպոնդենտներին էապես բարելավել ներկայացվող ցուցանիշների ամբողջականությունն ու որակը:

Եթե մինչև ս.թ. օգոստոսի 15-ը պաշտոնական վիճակագրության հիմնական օգտագործողների կողմից վիճակագրական հաշվետվությունների ներկայացման նոր ժամկետների վերաբերյալ չլինեն հիմնավորված առարկություններ, ապա սույն տարեվերջին՝ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի հաստատումից հետո, մեկամսյա ժամկետում, ծրագրի նախագիծը ժամկետների մասով կհաստատվի այդ փոփոխություններով, քանզի հաշվետվական ձևերի մշակման և հաստատման ընթացակարգերը պարունակում են ժամկետային սահմանափակումներ:

Այլ կարգի բովանդակային առաջարկություններն ու դիտողությունները, այդ թվում՝ նախատեսված միջոցառումների մասով, կենթարկվեն լրացուցիչ քննարկման:

***Շնորհակալություն համագործակցության համար***